



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ժամանակակից աշխարհի կրթական զարգացման
միտումները (հանրակրթական դպրոցի օրինակով)

Կատարող՝ Նվարդ Երեմյան

Երևանի Պ. Սևակի անվան հ. 123 հիմնական դպրոցի
դասվար

Ղեկավար՝ Վերոնիկա Բարաջանյան

Բովանդակություն

| | |
|--|----|
| Ներածություն | 3 |
| Գլուխ 1 Հանրակրթության զարգացման միտումները ՀՀ-ում և արտերկրում | |
| 1.1 Կրթության զարգացման միտումները ՀՀ-ում..... | 7 |
| 1.2 Հանրակրթական ոլորտի զարգացումը ՀՀ-ում..... | 17 |
| 1.3 Հանրակրթական ոլորտի զարգացումը արտերկրում՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Շվեյցարիա..... | 25 |
| Եզրակացություն | 28 |
| Օգտագործված գրականություն..... | 29 |

Ներածություն

Կրթության համակարգը փոխգործակցող տարբեր մակարդակի և ուղղության կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների, կրթական հաստատությունների տարբեր տիպերի և ձևերի, կրթական կառավարման օրգանների միասնությունն է:

Հիմնախնդրի վերաբերյալ մեր ուսումնասիրած փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, գիտական գրականության, հետազոտությունների փորձի արդյունքում վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության կրթության համակարգի զարգացման ներկա փուլում կան բոլոր նախադրյալները Հայաստանում կրթության զարգացման համար: Հանրակրթությունը կարևոր է նրանով, որ այն միակ, պարտադիր օղակն է, որ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է հանրակրթության գործընթացի մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլորի հավասար կրթության իրավունքի, անվճար պարտադիր միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:

Կրթությունը գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգի ձեռքբերման, յուրացման և դրա հիման վրա գիտական աշխարայացքի, բարոյական, անձնային որակների ձևավորման, ստեղծագործական ընդունակությունների զարգացման գործընթացն է և արդյունքը: Ընդհանուր առմամբ դա տեղի է ունենում փորձի միջոցով, որն ազդեցություն է թողնում մարդու մտածելակերպի, զգացողությունների կամ գործողությունների վրա: Կրթությունը ընդհանուր առմամբ ֆորմալ գործընթաց է, որով հասարակությունը գիտակցաբար իր կուտակած ունակությունները, ավանդույթները, և արժեքները փոխանցում է մի սերնդից մյուսին:

Կրթությունը որպես մարդու ուսուցման և դաստիարակության նպատակաուղղված գործընթաց ընդգրկում է ոչ միայն տվյալ անհատի, այլև, վերջին հաշվով, հասարակության, պետության հետաքրքրությունները: Կրթությունը կապված է անձի զարգացման և հետևաբար ինքնիրականացման պահանջմունքների հետ: Այն

արտացոլում է ոչ միայն անձի, այլև պետության՝ որպես ամբողջական համակարգի զարգացման պահանջմունքը:

Հանրակրթության բարեփոխումները հիմնականում ընդգրկում են բովանդակային հիմնահարցեր՝ կրթակարգ, նոր ուսումնական ծրագրեր, սովորողների ուսումնական արդյունքների գնահատման և քննությունների նոր համակարգ, ՏՀՏ ներառում ուսումնական գործընթացում և այլն:

Կրթության ոլորտի բարեփոխումների ժամանակաշրջանում պետության կողմից մշակվել և գործածության մեջ է դրվել օրենքների և իրավանորմատիվային փաստաթղթերի մի ամբողջ համախումբ, ինչը և նախկինում, և ներկայումս հիմք է ծառայել ոլորտի զարգացման համար: Դեռևս 1995 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրության 35-րդ հոդվածում ամրագրվել էր, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական մասնագիտական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար կրթություն ստանալու իրավունք :

Բոլոնիայի գործընթացը, որին միացել է Հայաստանի Հանրապետությունը (Բերգեն, 2005) բարձրագույն կրթության համակարգի զարգացման նպատակները, խնդիրները, հիմնական ուղղությունները, ինչպես նաև դրանք լուծելու գործողությունները բնութագրող, ընդհանրական համակարգ է: Նրա հիմնական նպատակներից մեկը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ապահովելն է: Եվրոպական բարձրագույն կրթության տարածք-ը պատկերացվում է որպես մի բաց տարածք, որում ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին հնարավորություն է ընձեռվում անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձորակ բարձրագույն կրթության համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներով, հանրակրթության նկատմամբ հասարակության կողմից ներկայացվող պահանջով, հանրակրթության ոլորտում իրականացվող կառուցվածքային փոփոխություններով և համաշխարհային կրթական համակարգերում առկա զարգացումներով:

Արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Հանրային կառավարման և, մասնավորապես, կրթության կառավարման բնագավառում իրականացվել են մի շարք

բարեփոխումներ, որոնց շնորհիվ մեծացել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծվել կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար, կառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ կրթական համակարգերում գործող կրթական հաստատությունների գործունեության ուսումնասիրության անհրաժեշտությամբ ըստ աշխարհում գործող մոդելների: Արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ այսօր միտում կա հանրակրթության իրականացման համընդհանուր մոտեցումների ձևավորմանը:

Գլուխ 1. Կրթության զարգացման միտումները ՀՀ-ում և արտերկրում

1.1 Կրթության զարգացման միտումները ՀՀ-ում

Կրթության համակարգը փոխգործակցվող կրթական ծրագրերի և պետական կրթական ստանդարտների տարբեր մակարդակի և ուղղության, տարբեր մակարդակի կրթական հաստատությունների տիպերի և ձևերի, կրթական կառավարման օրգանների միասնությունն է:

Կրթությունը գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգի ձեռքբերման, յուրացման և դրա հիման վրա գիտական աշխարայացքի, բարոյական, անձնային որակների ձևավորման, ստեղծագործական ընդունակությունների զարգացման գործընթացն է և արդյունքը: Ընդհանուր առմամբ դա տեղի է ունենում փորձի միջոցով, որն ազդեցություն է թողնում մարդու մտածելակերպի, զգացողությունների կամ գործողությունների վրա: Կրթությունը ընդհանուր առմամբ ֆորմալ գործընթաց է, որով հասարակությունը գիտակցաբար իր կուտակած ունակությունները, ավանդույթները, և արժեքները փոխանցում է մի սերնդից մյուսին:

Կրթությունը որպես մարդու ուսուցման և դաստիարակության նպատակաուղղված գործընթաց ընդգրկում է ոչ միայն տվյալ անհատի, այլև, վերջին հաշվով, հասարակության, պետության հետաքրքրությունները: Կրթությունը կապված է անձի զարգացման և հետևաբար ինքնիրականացման պահանջմունքների հետ: Այն արտացոլում է ոչ միայն անձի, այլև պետության՝ որպես ամբողջական համակարգի զարգացման պահանջմունքը:

Անձը հարաբերվում է կրթության համակարգի հետ՝ ելնելով սեփական պահանջմունքներից: Բացի այդ՝ կրթությունը կատարում է հարմարման, սոցիալականացման գործառույթ. այն օգնում է մարդուն հարմարվել տվյալ սոցիալական միջավայրին, գտնել առաջընթացի ուղիներ, ձեռք բերել որոշակի կարգավիճակ և այլն:

Պետության կողմից կրթության ապահովումը, դրա կազմակերպումն ու պայմանների բարելավումը բխում է վերջինիս շահերից: Կրթությունը պետության

քաղաքականության հիմնական ուղղություններինց մեկն է, քանի որ հանդիսանում է հզոր գործոն պետության զարգացման համար, եթե ոչ ամենահզորը: ¹

Զարգացած, արդյունավետ կրթական համակարգն արդեն իսկ հզոր ռեսուրս է: Պետությունը զարգացնում և կատարելագործում է որոշակի կրթական համակարգ, կրթական զարգացած համակարգն էլ իր հերթին հանդիսանում է հզոր ուժ, որի վրա կարող է հենվել պետությունը:

Այսպիսով, զարգացած կրթական համակարգը գործում է հոգուտ պետության շահերի: Հայաստանի Հանրապետությունում հատկապես կարևոր է կրթության համակարգի զարգացումը և որպես արդյունք դրանում որոշակի ավանդույթների, մշակույթի ձևավորումը, քանի որ կրթությունը հենարանային է մյուս համակարգերի զարգացման համար: Կրթական համակարգի ձեռքբերումները հաճախ հանդես են գալիս որպես կոնկրետ ռեսուրսներ պետության տնտեսության զարգացման համար: Եվ քանի որ կրթությունը, ռեսուրսային, սնող օղակ է մյուս ոլորտների համար, ապա դեռևս զարգացող Հայաստանի Հանրապետության պարագայում ակնհայտ է կրթական համակարգի զարգացման, կատարելագործման և արդյունավետության բարձրացման ռազմավարական նշանակությունը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը («Կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, Երևան, 1999թ.):

ՀՀ կրթության համակարգի բարեփոխման հիմնական սկզբունքները

Կրթությունը որպես մարդու ուսուցման և դաստիարակության նպատակաուղղված գործընթաց ընդգրկում է ոչ միայն տվյալ անհատի, այլև, վերջին հաշվով, հասարակության, պետության հետաքրքրությունները: Կրթությունը կապված է անձի զարգացման և հետևաբար ինքնիրականացման պահանջմունքների հետ: Այն արտացոլում է ոչ միայն անձի, այլև պետության՝ որպես ամբողջական համակարգի զարգացման պահանջմունքը:

Հայ կրթական համակարգի հիմք են կազմել հույն փիլիսոփաների՝ Հերակլիտի, Դեմոկրիտի, Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, ուսմունքները, ինչպես նաև հայ մեծ մտածողների՝ Եղիշեի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Տաթևացու և այլոց փիլիսոփայական և մանկավարժական հայացքները, որոնց վրա էլ ձևավորվել է կրթության փիլիսոփայությունը:²

Հայաստանում՝ Վաղարշապատում առաջին դպրոցը հիմնել է Մեսրոպ Մաշտոցը (5-րդ դար)³: Մաշտոցը բարձր գնահատելով դպրոցի համընդհանուր լուսավորության դերը, իր քարոզներում հիմնավորում է եզրակացնում է՝ ճանաչողությունը բնության և մարդու էության ըմբռնումն է, այն իրականացվում է ուսուցման, դաստիարակության և շրջապատի հետազոտման միջոցով:

Ժամանակակից կրթական համակարգի հիմքը դրվել է Հայաստանի առաջին հանրապետության տարիներին (1918-1920թթ.) և այնուհետև զարգացել խորհրդային իշխանության օրոք: 1920 թվականին դպրոցը տարանջատվեց եկեղեցուց՝ դառնալով աշխարհիկ: 1920-1930 թվականների կրթական համակարգի զարգացման և բարեփոխումների հետևանքով վերացավ զանգվածային անգրագիտությունը:

Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումներն սկսվել են իրականացվել ՀՀ անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում:

- 1) Հայաստանի Հանրապետությունը պետք է հիմնված լինի ուժեղ համալսարանների վրա: Սա առաջին և ամենակարևոր սկզբունքն է ուժեղ Հայաստան, առանց ուժեղ համալսարանների հնարավոր չէ

² Ասատրյան Լ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները Եր., 2009 էջ 4-5

³ Միմոնյան Յ., Հայ մանկավարժության պատմություն Եր., 2006թ. էջ 14-15

- 2) մյուս կարևորագույն սկզբունքը՝ համալսարաններն են և հասարակության ինտեգրացման խնդիրը: Չափազանց կարևոր է, որ համալսարանները այդ առաքելությունը վերցնեն իրենց ուսերին: Ինտեգրացված հասարակություն՝ առանց համալսարանի ակտիվ գործունեության, հնարավոր չէ: Կրթական բարենպաստ միջավայրի ձևավորում ՀՀ-ում՝ կրթությունը պետք է լինի արժեք: Ցանկացած ՀՀ քաղաքացի պետք է սա քաջ գիտակցի: Անկիրթ մարդիկ վտանգավոր են, անկիրթ մարդկացով մենք չենք կարող առողջ հասարակություն կառուցել, կրթված մարդկանց հանրությունը ներկայացնելու առաքելությունը կրթական համակարգի առաքելությունն է: Հասարակության ինտեգրացման հարցում ուշադրությունը պետք է սևեռել ոչ միայն բուհերի, այլև միջին մասնագիտական կրթության վրա՝ ուսումնարաններ, տեխնիկումներ, որոնց դերը մեր երկրում այժման էլ մեծ չէ, սա նույնպես առաջնային խնդիր է:
- 3) հաջորդ կարևոր սկզբունքը. մենք պետք է ունենանք այնպիսի կրթական համակարգ, որը պատրաստում է մեր շուկային անհրաժեշտ կադրեր: Ցավոք, դեռևս մեր կրթական համակարգից դուրս են գալիս շրջանավարտներ, որոնք շուկայում չեն կարողանում գտնել իրենց տեղը, այն պարագայում, երբ մյուս կողմից՝ կա բարձրորակ մասնագետների պահանջ: Եվ շատ հաճախ ձեռներեցները չեն կարողանում գտնել իրենց անհրաժեշտ մասնագետներ, ընդ որում՝ չափազանց բարձր աշխատավարձով: Այսինքն, այս փոխկապակցվածությունը խիստ անհրաժեշտ է մեր կրթական համակարգին:
- 4) հաջորդ կարևորագույն սկզբունքը, որը պետք է հեղափոխական փոփոխություններ կատարի մեր մտածողության մեջ, այն է, որ կրթությունը պետք է լինի շարունակական: Ժամանակակից աշխարհում ապրել առանց շարունակական կրթության, հնարավոր չէ: Համալսարանն ավարտելը դեռ չի նշանակում, թե շրջանավարտները դուրս են գալիս կրթական համակարգից: Կրթական համակարգը պետք է հետապնդի մեր քաղաքացուն մինչև իր կյանքի վերջ:
- 5) հաջորդ կարևորագույն սկզբունքը՝ կապն է բարձրագույն կրթության և գիտահետազոտական աշխատանքների հետ: Սա մեր համալսարանների թույլ կողմն է: Հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից համալսարան, որտեղ չեն դասավանդում հայտնի հռչակավոր գիտնականներ: Եթե մենք գիտությունը

պոկում ենք համալսարաններից, տուժում են ինչպես գիտությունը, այնպես էլ համալսարանները:

- 6) հաջորդ սկզբունքը՝ համալսարանների և արտադրության կապն է: Այսինքն՝ մենք պետք է համալսարաններում այնպիսի ներուժ ունենանք, որոնց գիտական կարողությունների արդյունքները կիրառելի լինեն և հնարավոր լինի դրանք ներդնել ՀՀ-ում: Այսինքն, սա նաև կրթական համակարգի ինովացիոն ուղղվածությունն է, ըստ որի, կրթական համակարգը պետք է հաշվի առնի, որ այլևս հասարակական զարգացումներն առանց ինովացիաների հնարավոր չեն լինելու:
- 7) մի կարևոր սկզբունք էլ կա, որն օգտակար կլինի մանավանդ մեր համալսարաններին. դա տեղեկատվության հասանելիությունն է հասարկության համար: Նրանք պետք է իրենց ինտերնետային կայքերում տեղադրեն այն կարևորագույն նվաճումները, որոնց հասել են, ներկայացնեն իրենց գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, և հանրությունը պետք է քննդատաբար վերլուծի դրանք: Մենք ունենք համալսարաններ, որոնք ընդհանրապես այդպիսի արդյունքներ չեն տալիս: Եվ սա պետք է լինի կարևորագույն չափանիշներից մեկը, որով գնահատելու ենք որևէ համալսարանի դերը, կշիռը մեր հասարակական կյանքում:

Վերը նշված ուղղություններով համակարգային փոփոխությունների իրականացումը ենթադրում է խորը վերլուծությունների վրա հիմնված ճյուղային զարգացման կոնկրետ ծրագրեր: Մենք ձգտում ենք, որ Հայաստանը ճանաչվի որպես ազատ մրցակցային միջավայրում գործարարության և ներդրումների համար լավագույն պայմաններ ապահովող երկիր: Մեր ապագան գիտելիքի վրա հիմնված հասարակությունն է: 21-րդ դարում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական հրամայականը ինտելեկտի և գիտելիքների վրա հիմնված հասարակության ձևավորումն է: 21-րդ դարում ունենալ կրթության ցածր մակարդակ նշանակում է ունենալ ցածր կենսամակարդակ: Անհրաժեշտ է ընդունել նոր օրենքներ, վերակառուցել գիտության և կրթության համակարգը, ստեղծել այնպիսի կառույցներ, որոնք հնարավորություն կտան համախմբել համայն հայության գիտական և մտավոր ներուժը: Նման ապագայի կառուցումը կախված է նրանից, թե որքանով մեզ կհաջողվի ստեղծել արդյունավետ,

մրցունակ, ժամանակի պահանջներին համապատասխան գիտական և կրթական համակարգ: Իսկ դրա նախադրյալները մենք լիովին ունենք:

Սկսած 2005 թ-ից՝ Հայաստանում կրթական ոլորտը լուրջ բարեփոխումների է ենթարկվում: 2007 թվականի սեպտեմբերից հանրակրթական համակարգում իրականացված արմատական փոփոխություններին (երբ տասնամյա կրթությանը փոխարինելու եկավ տասներկուամյա կրթությունը) հաջորդեցին փոփոխությունները նաև բուհական կրթության ոլորտում:

Այս ամենի համար հիմք հանդիսացավ կրթության և գիտության ոլորտում մերձեցման ապահովման Եվրոպայի ձգտումը, որի արդյունքում դեռևս 1999 թվականին 29 երկրների կողմից ստորագրվեց Բոլոնիայի հռչակագիրը: Այժմ հռչակագրին միացած պետությունների թիվը հասնում է 46-ի, իսկ 2005 թ-ի մայիսի 19-ից հռչակագրին է միացել նաև Հայաստանը: Ինչպես և հռչակագիրը ստորագրած յուրաքանչյուր երկիր, այնպես էլ, բնականաբար, Հայաստանը ստանձնեց որոշակի պարտավորություն, այն է՝ ըստ գործողությունների առանձին ուղղությունների՝ պետք է մինչև 2010 թ-ն ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումը և մաս դառնալ կազմակերպվող Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի: Բոլոնիայի գործընթացը տասը հիմնարար դրույթների ամբողջություն է: Այդ դրույթներն են՝ դյուրընթեռնելի և համեմատելի աստիճանների (որակավորումների) և 3 հիմնական աստիճանների վրա հիմնված համակարգի ընդունում, կրեդիտների համակարգի ներդրում, աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական կազմի շարժունությանը, որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցության խրախուսում, բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանում, շարունակական կրթության կարևորում, աջակցություն եվրոպական բարձրագույն կրթական տարածքի գրավչության բարձրացմանը, դոկտորական ծրագրի ներդրում:

Այս նոր կրթական համակարգի ընձեռած առավելություններից է այն, որ ուսանողը կարող է արդեն կրթական գործընթացը հարմարեցնել իր նախասիրություններին և ժամանակին, ակտիվ կերպով մասնակցել իր կրթական գործընթացի կազմակերպմանը, այսինքն՝ ներազդել դրա վրա և հարմարեցնել իրեն:

Փոփոխման է ենթարկվել նաև գնահատման կարգը. գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով. գնահատվում են գրավոր աշխատանքները, հաճախելիությունը, ստուգողականներն ու բանավոր պատասխանները: Այս նոր

համակարգի շնորհիվ՝ ուսումնական ծրագրերը դառնում են առավել ճկուն, ուսանողները ձեռք են բերում դասընթացների լայն ընտրության հնարավորություն: Բարեփոխումները բուհերում իրականացվում են հետևյալ պարզ սկզբունքով՝ դրանց ղեկավարումը կենտրոնացված է, իսկ իրականացումը՝ ապակենտրոնացված: Գործունեության այս կարգն ավելի է մեծացնում ֆակուլտետի դերը համակարգի ներդրման գործում: Բարեփոխումների իրականացման համար լուրջ խոչընդոտ է տեղեկացվածության ցածր մակարդակը կամ դրա իսպառ բացակայությունը:

Բոլոնիայի գործընթացով նախատեսվող բարեփոխումներն արդեն մեկնարկել են: Սկզբունքորեն Բոլոնիայի գործընթացը բացասական կողմեր չունի, սակայն դրա իրականացման փուլում հնարավոր է նաև որոշ բացասական կողմերի դրսևորում: Բնական է, որ համակարգը չի կարող միանգամից անթերի գործել. դա ուղղակի հնարավոր չէ:

Բոլոնիայի գործընթացը, որին միացել է Հայաստանի Հանրապետությունը (Բերգեն, 2005) բարձրագույն կրթության համակարգի զարգացման նպատակները, խնդիրները, հիմնական ուղղությունները, ինչպես նաև դրանք լուծելու գործողությունները բնութագրող, ընդհանրական համակարգ է: Նրա հիմնական նպատակներից մեկը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ապահովելն է: Եվրոպական բարձրագույն կրթության տարածք-ը պատկերացվում է որպես մի բաց տարածք, որում ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին հնարավորություն է ընձեռվում անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձրակարգ բարձրագույն կրթության համար: Այսպիսի բաց տարածքի անկյունաքարերն են բարձրագույն կրթության որակավորումների փոխձանաչումը, թափանցիկությունը և եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում: Վերջին տարիներին ՀՀ-ում տարբեր հարթություններում իրականացված միջոցառումներն արդեն արձանագրել են դրական տեղաշարժեր: Չնայած այս ամենին, բարձրագույն կրթության հարթությունում դեռևս բավականին շատ են խնդիրները: Մասնավորապես, դեռևս ավարտված չէ գործընթացի կարևորագույն գաղափարներից մեկի՝ ուսանողակենտրոն համակարգի ձևավորումը: Կրթական նախկին մեթոդների ու գործիքների շարունակական կիրառումը, Բոլոնիայի գործընթացի նպատակների ու խնդիրների որոշ դեպքերում ոչ բավարար հանրայնացումն ու հետևաբար՝ իմացությունը բերում են նրան, որ վերափոխումների մի մասը շարունակում

է գոյություն ունենալ թղթի վրա կամ փոխակերպվում է դասախոսների ու ուսանողների ցանկություններին համապատասխան:

Բարեփոխումների ներկա փուլը սկսվեց 2003 թվականից: Այս փուլում պետական ու ազգային կարևորագույն խնդիրը կրթության համակարգի առաջանցիկ զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումն է: Բարեփոխումների այս շրջանի կարևորագույն մաս են կազմում մասնագիտական կրթության բարեփոխումները: Մասնագիտական բարձրագույն կրթության բարեփոխումների առաջնային ուղղությունը Հայաստանի ինտեգրումն է Եվրոպական կրթական միասնական տարածքում, ապահովելով Բոլոնիայի գործընթացի պայմանների կատարումը՝ որակի ապահովման, որակավորումների նոր համակարգի, ուսումնական կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) ներդրումը և այլն:

Կրթական բարեփոխումների այս փուլում հանրակրթության բարեփոխումները հիմնականում ընդգրկում են բովանդակային հիմնահարցեր՝ կրթակարգ, նոր ուսումնական ծրագրեր, սովորողների ուսումնական արդյունքների գնահատման և քննությունների նոր համակարգ, ՏՀՏ ներառում ուսումնական գործընթացում և այլն:

Կրթության ոլորտի բարեփոխումների այս 10-ամյա ժամանակաշրջանում պետության կողմից մշակվել և գործածության մեջ է դրվել օրենքների և իրավանորմատիվային փաստաթղթերի մի ամբողջ համախումբ, ինչը և նախկինում, և ներկայումս հիմք է ծառայել ոլորտի զարգացման համար: Դեռևս 1995 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրության 35-րդ հոդվածում ամրագրվել էր, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական մասնագիտական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար կրթություն ստանալու իրավունք :

1999 թվականի ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որը, հիմնվելով Սահմանադրության դրույթների վրա, որոշակիորեն ուղղորդել է վերափոխվող համակարգի զարգացումը: Օրենքն ընդունելուց հետո, հրատապ

խնդիրների լուծման առաջնայնությունից ելնելով, ժամանակ առ ժամանակ այն ենթարկվել է փոփոխությունների և լրացումների:⁴

Կրթական համակարգը գործառնում և զարգանում է մարդու ուսուցման և դաստիարակության կրթական գործընթացում՝ ուսումնադաստիարակչական գործընթացում: Կրթական գործընթացը ուղղակի ինչ-որ բանի փոխանցումը չէ մեկից մյուսին, այն սերունդների միջև միայն միջնորդ չէ: Կրթության մեջ որպես ներքին գործընթաց հանդես է գալիս օրգանիզմի ինքնազարգացումը: Կարևոր մշակութային ձեռքբերումների փոխանցումը և ավագ սերնդի կողմից կրտսեր սերնդի ուսուցանումը միայն այդ գործընթացի արտաքին կողմն է: Կրթության խնդիրն է մարդու զարգացումը և ինքնազարգացումը ուսուցման գործընթացում: Կրթությունը որպես գործընթաց չի դադարում մինչև մարդու գիտակցական կյանքի վերջ: Այն մշտապես փոփոխվում է ըստ նպատակի, բովանդակության, ձևի:

Կրթության անընդհատությունը, բնութագրելով նրա գործառնական կողմը, հանդես է գալիս որպես նրա հիմնական գիծ: Կրթության դիտարկումը որպես գործընթաց ենթադրում է՝

- Նախ և առաջ նրա 2 կողմերի տարբերակում՝ ուսուցանում և ուսուցում
- Կրթությունը ներկայացնում է ուսուցման և դաստիարակության միասնություն, Կրթությունը ներառում է գիտելիքների, հմտությունների ձեռքբերում, ուսումնագործնական գործողությունների յուրացում:

Կրթությունը որպես արդյունք կարող է դիտարկվել 2 ասպեկտներում՝

1. Այն արդյունքի պատկեր, որը պետք է ձեռք բերվի կոնկրետ կրթական համակարգի միջոցով՝ ֆիքսված կրթական ստանդարտի ձևով: Ժամանակակից
2. կրթական ստանդարտները ենթադրում են պահանջներ մարդկանց որակների, գիտելիքների և հմտությունների հանդեպ, ովքեր ավարտում են կրթական որոշակի կուրս:
3. Կրթական արդյունքի գոյության երկրորդ ասպեկտ հենց մարդն է, ով անցել է ուսուցում որոշակի կրթական համակարգում: Նրա կրթական կոմպետենցիան, փորձը՝ որպես ձևավորված ինտելեկտուալ, անձնային, վարքային որակների

⁴ ՀՀ աշխատանքային օրենքը աշակերտներին թույլատրելի աշխատանքային ժամանակի մասին, հոդված 17

ամբողջականություն, հնարավորություն է տալիս նրան ադեկվատորեն գործել համապատասխան իրադրություններում: Այսպես, դպրոցը ձևավորում է շրջանավարտի ընդհանուր կրթվածությունը: Ցանկացած բարձրագույն կրթական հաստատության շրջանավարտը այս հիմքի վրա բնութագրվում է հատուկ մասնագիտական կրթվածությամբ: Կրթական վերջնարդյունքը կրթական կոմպետենցիան է:

Կրթության բովանդակության յուրացումը սովորաբար իրականացվում է չորս մակարդակներով՝ ճանաչողական, վերարտադրական, կիրառական և ստեղծագործական:

1. Առաջին մակարդակում սովորողը ճանարում է իր իմացածը:
2. Սովորական վերարտադրության մակարդակներում աշակերտը կարողանում է վերարտադրել կարդացածն ու լսածը՝ առանց աղավաղումների:
3. Կիրառական մակարդակում յուրացածը կիրառվում է զանազան բնույթի խնդիրներ լուծելով:
4. Ստեղծագործական մակարդակում նյութի ուսումնասիրությունը կազմակերպելիս և յուրացումը ստուգելիս, ուսուցիչը աշակերտի մոտ հայտնաբերում է նոր գիտելիքներ:

1.2 Հանրակրթական ոլորտի զարգացումը ՀՀ-ում

ՀՀ կառավարության 2009 թ. ծրագրի երրորդ գերակայությունը կրթության և գիտության զարգացումն է և այդ ուղղությամբ 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելը: Այս գերակայությունը ենթադրում է՝

- ✓ մտավոր կարողության և գիտելիքի վրա հիմնված հասարակության ձևավորում, որտեղ հիմնական շարժիչը գաղափարները և հայտնագործություններն են, և դրանք առօրյա կյանքում ներդնելու ունակություն: Սա առաջին հերթին

ենթադրում է հետազոտական աշխատանքների ուժեղացում համալսարաններում, որոնք պետք է վերածվեն գիտական լուրջ կենտրոնների.

- ✓ կրթության որակի էական բարելավում և կրթության (այդ թվում՝ բարձրագույն կրթության) հասանելիության մակարդակի բարձրացում՝ բնակչության անապահով խմբերի համար: Կրթական համակարգում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների կիրառման ոլորտների ընդլայնում, այդ ծառայությունների որակի բարելավում ու մատչելիության ապահովում.
- ✓ ինտերակտիվ էլեկտրոնային կրթության զարգացում և համատարած կիրառում՝ քաղաքացիների, հատկապես երիտասարդների համար համակարգչից օգտվելը կդառնա անհրաժեշտություն, իսկ համակարգչային ցանցերը՝ մատչելի: ⁵ Կառավարությունը միջոցներ է ձեռնարկելու միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան կրթության որակ ապահովող կրթական համակարգի ստեղծման, գիտության զարգացման ուղղությամբ: Այն պետք է ուղղված լինի տարածաշրջանում Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի, հեղինակության վերականգնմանը: Կյանքի բոլոր փուլերում որակյալ և ցկյանս կրթություն ստանալու հնարավորությունների ապահովումը լինելու է ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական առանցքը:

Կառավարությունը հետամուտ կլինի, որ մինչև 2012 թվականը Հայաստանի բոլոր դպրոցներն ապահովված լինեն բավարար քանակությամբ համակարգչային սարքավորումներով, և դրանց գերակշիռ մասն ընդգրկված լինի դպրոցական միասնական համացանցում, երրորդ՝ կառավարությունն ապահովելու է համակարգչային հմտություններ և օտար լեզուներ ուսանելը՝ սկսած կրտսեր դպրոցից, չորրորդ՝ կրթական համակարգի արդյունավետության մեծացման, Հայաստանում և զարգացած երկրներում կրթության որակի միջև առկա անհամապատասխանության վերացման տեսակետից կառավարությունը կարևորում է կրթության արդյունքների գնահատման արդիական համակարգի և որակի ապահովման ազգային կենտրոնի ձևավորումը, համապատասխան օրենսդրական փաթեթի մշակումը: Գործողություններ կիրականացվեն նաև եվրոպական երկրներում Հայաստանի բարձրագույն կրթության

⁵ <http://www.edu.am/index.php?id=709&topMenu=-1&menu1=217&menu2=229>

ավարտական փաստաթղթերի ճանաչման ուղղությամբ, հինգերորդ՝ կրթության նկատմամբ որակապես նոր պահանջների ձևավորումը թելադրում է զգալիորեն բարձրացնել մանկավարժական կադրեր իպատրաստման վերապատրաստման, մասնագիտական առաջխաղացման և ատեստավորման մեխանիզմների արդյունավետությունը, հինգերորդ՝ արդիական հմտություններ ունեցող որակյալ կադրերի պահանջարկը բավարարելու նպատակով կառավարությունը կաջակցի կրթական համակարգի և տնտեսության իրական հատվածի միջև կապի ապահովմանը: Կներդրվի մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի գնահատման եվրոպական լավագույն փորձը, վեցերորդ՝ նախադպրոցական կրթության զարգացումն ուղղվելու է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը:

Կառավարությունը կաջակցի համայնքներին ընդլայնելու նախադպրոցական կրթական ծառայությունները և մեծացնելու դրանցում հատկապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը, յոթերորդ՝ մասնագիտական և շարունակական կրթության ոլորտում կառավարությունը շարունակելու է եվրոպական կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը՝ Լիսաբոնյան հռչակագրի սկզբունքներին համապատասխան՝ արմատական թարեփոխումներ իրականացնելով ինչպես համալսարանական, այնպես էլ միջին մասնագիտական կրթության ոլորտում: Մինչև 2010 թվականը կներդրվի Բոլոնիայի գործընթացով նախատեսված, միջազգային չափանիշներին համադրելի որակավորումների ազգային համակարգ, կիրականացվեն արմատական քայլեր համալսարանական կառավարման արդիականացման, այդ թվում՝ գիտական կադրերի որակավորման և ասպիրանտական ուսուցման կատարելագործման ուղղությամբ, ութերորդ՝ կրթության ոլորտի բարեփոխումներին համարժեք և համաչափ՝ կառավարությունը կապահովի պետական ծախսերի շարունակական ավելացումը: 2012 թվականին կապահովվի համախառն ներքին արդյունքի նկատմամբ առնվազն 3.5 տոկոս ցուցանիշ, իններորդ՝ կառավարությունը, գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը համարելով Հայաստանի կայուն զարգացման գրավական, մեծապես խթանելու է գիտության ոլորտի բարեփոխումները՝ զարգացնելով գիտության հարցերով զբաղվող առանձին լիազոր մարմնի գործունեությունը: Նպատակ ունենալով արագացնել համակարգի ենթակառուցվածքների արդիականացումը՝ կբարձրացվի ոլորտի կառավարման և գիտական աշխատանքների արդյունավետությունը, կապահովվեն ձևավորված պետական աջակցության միտումները: Այդ առումով՝

գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման նպատակով միջազգային արդի չափանիշներին համահունչ գիտական հասարակայնության անմիջական մասնակցությամբ կվերահաստատվեն Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները:

Բարեփոխումների արդյունավետությունն ապահովելու համար հստակեցվելու են գիտության զարգացման գործում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տեղն ու դերը, գիտահետազոտական ինստիտուտների մրցունակության ապահովման, համալսարանական գիտության հետ այդ ինստիտուտների համադրման մեխանիզմները, տասերորդ՝ կառավարությունը հետամուտ է լինելու բարձրագույն ուսումնական հաստատությունները գիտական լուրջ կենտրոններ դարձնելուն՝ խթանելով հետազոտական աշխատանքների ուժեղացումը: Գիտության զարգացման առումով կարևորվում է գիտնականների համար գիտությամբ զբաղվելու գրավչության ապահովումը և գիտական գործունեության արդյունքներն իրացնելու հնարավորությունը տեղական և համաշխարհային շուկաներում:

Հայաստանում կրթական ծրագրավորված բարեփոխումները սկսվեցին 1997թ-ին: Բարեփոխումների առաջին փուլը ներառում էր կրթության կառավարման և ֆինանսավորման համակարգի վերափոխումը: Այս բաղադրիչի շրջանակներում ներդրվեց ըստ աշակերտի ֆինանսավորման համակարգը՝ փոխարինելով ըստ դասարանների թվի ֆինանսավորման համակարգին: Ներդրվեց դպրոցների կառավարման նոր համակարգ, որի համաձայն դպրոցի տնօրենն ընտրվում է կառավարման խորհրդի կողմից: Ձևով ժողովրդավարական այս մեխանիզմն առ այսօր լիարժեք չի գործում և առկա են կոռուպցիոն ռիսկեր: Խորհուրդները լիարժեք չեն կատարում ոչ միայն տնօրենի ընտրության գործառույթը, այլև ըստ էության ակտիվորեն ներգրավված չեն դպրոցի կառավարման գործընթացում: 1997 ներդրվեց դասագրքերի շրջանառու համակարգը, որը հնարավորություն տվեց սովորողներին մատչելի գնով ապահովել դասագրքերով՝ վարձակալության սկզբունքով: Դասագրքերի ընտրությունը կատարվում է մրցութային սկզբունքով, ինչը նույնպես դեռևս լիարժեք կայացած չէ: Նույն թվականին մեկնարկեց դպրոցների բարելավման ծրագիր, ինչը հնարավորություն էր տալիս դպրոցներին ներկայացնել նախագծեր և շահելու դեպքում ստանալ ֆինանսական միջոցներ դրանք իրականացնելու համար: Դպրոցների նախաձեռնողականությունը և ծրագիր գրելու կարողությունները զարգացնող այս ծրագիրը շարունակական չդարձավ:

Կրթության արդյունավետության խնդիրը անմիջականորեն առնչվում է կրթական միջավայրի որակի բարելավման խնդրին: Կրթական միջավայրի բարելավման խնդիրը, որպես կրթության զարգացման գործոններից և անհրաժեշտ նախադրյալներից մեկը, հատկապես կարևորվում է.

Դպրոցական ուսուցման փուլ

Դպրոցական ուսուցումն անձի զարգացման և սոցիալականացման թերևս ամենատևական փուլն է: Դպրոցական ուսումնառության տարիները, գաղտնիք չէ, որ ամենաարդյունավետն են մարդու կողմից գիտելիքի յուրացման և ամրապնդման տեսանկյունից: Սա այն ժամանակաշրջանն է, երբ մարդն առավել զգայուն է կրթության, գիտելիքի յուրացման նկատմամբ: Հետևաբար բարենպաստ կրթական միջավայրի ապահովումը կարևոր է, քանի որ այս շրջանի բացերը թե գիտելիքի ձեռքբերման, թե միջավայրին հարմարվելու մեխանիզմների մշակման տեսանկյունից հետագայում դժվարությամբ և թերի են լրացվում:

Հանրային կառավարման և, մասնավորապես, կրթության կառավարման բնագավառում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց շնորհիվ մեծացել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծվել կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար, կառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ: Սակայն արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ կան, որոնք պետք է լուծվեն: Կրթության կառավարման մասնագետների նպատակային պատրաստում չի իրականացվում, իսկ կարողությունների զարգացման առանձին ծրագրերն էականորեն չեն բարելավել իրավիճակը: Կարողությունների պակաս է զգացվում հատկապես ծրագրերի կառավարման, ռազմավարական պլանավորման, մոնիթորինգի և գնահատման, դոնորների հետ աշխատանքների բնագավառներում:

1.3 Հանրակրթական ոլորտի զարգացումը արտերկրում

20-րդ դարի վերջին տասնամյակներում աշխարհում արագ թափ են ստանում ներառական գործընթացները, որոնք ընդգրկում էին տնտեսությունը, քաղաքականությունը, գիտությունը, կրթությունը, մշակույթը: Այս գործընթացները հատկապես բուռն են ընթանում Եվրոպական մասում: Ժամանակակից Եվրոպական կրթական համակարգի զարգացման հիմքում ընկած է «Եվրոպականացումը»: Եվրոպայի բնակիչներն առաջին հերթին պետք է զգան եվրոպացիներ, այնուհետև անգլիացիներ, ֆրանսիացիներ, գերմանացիներ և այլն: Դա թելադրում էր, որպեսզի այդ տարածքում հասունացող սերնդի դաստիարակությունն իրականացվի «կրկնակի կոռեկտության» ոգով՝ իր երկրի և միասնական եվրոպայի հանդեպ:

20 րդ դարի 70-90 –ական թվականներին կրթական բարեփոխումների առանցքը հանդիսացավ հանրակրթական դպրոցը, որը դիտվում էր որպես կրթական համակարգի կարևորագույն օղակ: Այդ ժամանակահատվածում աշխարհում կիրառվում էին ճանաչում ստացած հայեցակարգեր, որոնց համաձայն՝ տարբեր երկրների կրթական համակարգերի հաջողված փորձերի տարրերի հիման վրա կարելի է ստեղծել բոլոր երկրներում կիրառելի կրթական համակարգերի չափորոշիչների որոշակի մոդել: Սակայն որոշ մասնագետներ գտնում են, որ ազգային կրթական համակարգերի «ներկապնակները» պետությունների անկախության և մշակութային ինքնասիրության այնպիսի կարևորագույն հատկանիշներ են, որոնցով հպարտանում են եվրոպական ժողովուրդները:⁶⁷

Հանրակրթական ոլորտի զարգացումը Ֆրանսիայում

⁶ Ա.Ս Հարությունյան, Համեմատական մանկավարժություն ուսումնական ձեռնարկ, Երևան 2004թ

⁷ krtutyun.wordpress.com

Ֆրանսիայում յուրաքանչյուր տասը տարին մեկ իրականացվում են դպրոցական բարեփոխումներ: 20 ըդ դարի 60-ական թվականներից սկսած՝ իրականացվել են հանրակրթական դպրոցի թվով չորս բարեփոխումներ (1963, 1975, 1985, 1989), որոնց ընթացքում հստակեցվել են հանրակրթական դպրոցի կառուցվածքը և կառավարման մեխանիզմները, վերանայվել է կրթական բովանդակությունը, կատարելագործվել են ուսումնական պլաններն ու ծրագրերը, մանկավարժական կադրերի պատրաստման համակարգը:

20-րդ դարի 60-ական թվականներին Ֆրանսիան ստեղծում է մասսայական հանրակրթական դպրոցների միասնականության մոդելը, որի արդյունքում ֆրանսիական դպրոցական համակարգում տեղի ունեցան կառուցվածքային ու բովանդակային փոփոխություններ: 1963 թվականին, Հ. Ֆուշեի (կրթության նախարար) և Ժ. Կապելլիայի (բարեփոխումների գաղափարախոս) նախաձեռնությամբ սկսեց գործել նոր տիպի դպրոց՝ չորսամյա քոլեջ: Ֆրանսիական դպրոցական կրթության համակարգն ընդունեց հետևյալ տեսքը. 5+4 (կրտսեր դպրոց+քոլեջ) կամ 5+7 (կրտսեր դպրոց+ լիցեյ): Լիցեյում փոփոխված էին ուսումնական պլաններն ու ուսուցման պրոֆիլները:

Ֆրանսիական դպրոցի բարեփոխման տեսանկյունից նշանակալից էր 1975 թվականը: Բարեփոխումները կոչվեցին այդ ժամանակաշրջանի կրթության նախարար Ռ. Աբի անվամբ:

1975 թվականից սկսած՝ երկրում ստեղծվեց տասներկուամյա միասնական դպրոց: Ֆրանսիական դպրոցական կրթության մոդելն ստացավ հետևյալ տեսքը 5+4+3: Քոլեջը վերափոխվում է հանրակրթական դպրոցի առաջին աստիճանի: Փաստորեն ստեղծվում են մասսայական միջնակարգ ուսումնական հաստատություններ՝ ընդգրկելով համապատասխան տարիքի բոլոր երեխաների պարտադիր կրթությունը: Քոլեջում կրթությունը բաժանվում է երկու փուլի՝ դիտման փուլ (6-5 դասարաններ) և կողմնորոշման փուլ (4-3 դասարաններ): Ֆրանսիայում գործում է դասարանների հաշվառման հակառակ հերթականություն: Դպրոցի մնացած երեք դասարանները վերակազմավորվեցին և դարձան ինքնուրույն միջնակարգ ուսումնական հաստատություն՝ լիցեյ:

Կառուցվածքային բարեփոխումներին զուգահեռ՝ բոլոր ուսումնական հաստատություններում մեծ ուշադրություն է դարձվում կյանքին առավել մոտեցված կրթության բովանդակությանը, նոր ուսումնական պլանների ու ծրագրերի ստեղծմանը:

ԱՄՆ - Ամերիկյան դպրոցական մոդելն ունի հետևյալ տեսքը՝ 6+3+3: Հինգ տարեկան հասակում մանուկ ամերիկացիների մեծ մասը հաճախում է մանկապարտեզ, այլ հոսքով զրո դասարաններ: Ծնողների մեծ մասը նախապատվությունը տալիս է պետական դպրոցների նախադպրոցական բաժիններին, մյուս մասը գերադասում է մասնավոր նախադպրոցական հաստատությունները:

Սկզբնական կամ տարրական դպրոցը երեխաներին շերտավորում է ըստ իրենց ընդունակությունները բաժանվում են հետևյալ խմբերի՝ A(շնորհալիներ), B(սովորականներ), C(ոչ շնորհալիներ): Չնայած երկրում գոկություն չունի կրտսեր դպրոցի համար միասնական պլան , այնուամենայնիվ, կան մի քանի առարկաներ, որոնք պարտադիր են ԱՄՆ-ի բոլոր նահանգների համար: Այդ առարկաներն են՝ լեզվական արվեստ (ընթերցանություն, նամակ, ուղղագրություն, գրականություն), թվաբանություն, սոցիալական գիտություններ (պատմություն, աշխարհագրություն, քաղաքագիտություն), բնագիտություն, երգեցողություն, արվեստ, ֆիզկուլտուրա: Կրտսեր դպրոցների մեծ մասի ուսումնական գործընթացներում ուսումնասիրվում են ինֆորմատիկայի հիմունքներ և համակարգչային աշխատանք:

ԱՄՆ-ում սկզբնական կրթության նպատակն է.

- Ձևավորել տարրական կարողություններ ու հմտություններ,
- Ձևավորել ուսման նկատմամբ գիտակցված վերաբերմունք:

Պատմականորեն ստացվել է այնպես, որ ԱՄՆ-ում, ի տարբերություն Եվրոպայի, որտեղ գոյություն ունեն վերնախավային և մասսայական դպրոցներ, ստեղծվեց միասնական համընդհանուր միջնակարգ դպրոց՝ միավորելով բոլոր երեխաներին ընդհանուր տանիքի տակ, առաջարկելով տարբեր բարդության ուսումնական ծրագրեր: Ամերիկյան դպրոցի ակադեմիական բաժինը 10-12-րդ դասարանների աշակերտներին պատրաստում է բուհական ընդունելության քննություններին: Դպրոցականների մեծ մասը (մոտ 75 %-ը), շարունակելով ուսուցումը ընդհանուր և մասնագիտական բաժիններում, ուսումնասիրում են երեք հիմնական (մայրենի լեզու, հասարակական գիտություններ և ֆիզկուլտուրա) և մի շարք ընտրովի առարկաներ(ընտանեկան տնտեսագիտություն, մեքենայի վարում, մթերքների պահեստավորում, երեխաների և մեծերի նկատմամբ խնամք): Այս ամենի արդյունքում հանրակրթական պատրաստվածության մակարդակը շատ ցածր է: Երիտասարդ ամերիկացիներն ավարտում են դպրոցը գիտելիքների ցածր պաշարով հատկապես՝ մաթեմատիկայից,

աշխարհագրությունից, բնական գիտություններից, օտար լեզուներից: Լիարժեք կրթություն է ստանում դպրոցների շրջանավարտների միայն մեկ քառորդը: Նման իրավիճակը չէր կարող չանհանգստացնել երկրի կառավարությանը, տեղական իշխանություններին, հասարակությանն ու մանկավարժներին: 20 ընդհանուր դասարանական թվականներին երկրում մշակվում և կիրառության մեջ են դրվում հանրակրթական գիտելիքների, կարողությունների, հմտությունների պետական չափորոշիչները և թեստավորման համակարգը: Սկսած գործընթացն ապացուցեց իր կենսունակությունն ու սովեց շոշափելի դրական արդյունքներ: Ավելացավ ակադեմիական առարկաները ուսումնասիրողների թիվը: Բարելավվեց մաթեմատիկա և բնագիտական առարկաներից գիտելիքների մակարդակը: Տվյալ ժամանակահատվածում, ընդհանուր ժամանակահատվածում, ընդհանուր ժամաքանակի մեջ, ընտրովի դասընթացները կազմում են ընդամենը 25-30%:

Միջնակարգ դպրոցը բաժանվում է երկու աստիճանի՝ կրտսեր և միջին: Երկու դեպքում էլ ուսումնառության ժամկետը երեք տարի է: Երկրում գոյություն չունեն միասնական ուսումնական պլաններ, ծրագրեր ու դասագրքեր: Յուրաքանչյուր կրթական շրջան հանձնարարականներ է մշակում ուսումնական ժամերի բաշխման, ուսումնական առարկաների ծրագրերի ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև մեթոդական մշակումներ իրականացնում առանձին թեմաների շուրջ:

Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Նրա տևողությունը 170-186 ուսումնական օր է: Երեխաները դպրոց են հաճախում շաբաթը հինգ օր: Պարտադիր առարկաների հետ մեկտեղ (անգլերեն, մաթեմատիկա, հասարակագիտություն, բնագիտություն, ֆիզկուլտուրա և հիգիենա, երաժշտություն, կերպարվեստ, ճաշատանք, տնարարություն), դպրոցն առաջարկում է նաև ընտրովի դասընթացներ: Երեխաների կողմից առարկաների ընտրությունն իրականացվում է ինքնուրույն կամ խորհրդատուի օգնությամբ:

ԱՄՆ-ի միջնակարգ դպրոցներում զգալի թվով սովորողներ դուրս են մնում ուսուցման գործընթացից: Հետազոտողները նշում են, որ դպրոցներից դուրս մնացողները հիմնականում բնակչության ոչ սպիտակամորթ հատվածն են (աֆրոամերիկացիներ, լատինաամերիկացիներ, հնդկացիներ): Այդ կապակցությամբ ԱՄՆ-ի մի շարք

⁸ Համեմատական մանկավարժություն (դասախոսություններ)

նահանգներում մեծ տարածում ստացավ մայրենի լեզվով ուսուցման գործընթացը(հատկապես դա վերաբերում է ԱՄՆ-ի հարավային նահանգներին՝ Ֆլորիդային, Ռեխասին, Կալիֆոռնիային, որտեղ տարագիրների հոսքը մեծ թիվ է կազմում): Մի քանի նահանգների կառավարությունների կողմից ընդունված՝ երկլեզվության (բիլինգվալի) մասին օրենքը զգալիորեն նպաստեց դպրոցներից սովորողների հեռացման խնդիրների լուծմանը:

ԱՄՆ-ի ժամանակակից դպրոցական համակարգը զարգանում է՝ հիմք ընդունելով կրթության ոլորտի ռազմավանական հետևյալ նպատակները.

- Ամերիկայի բոլոր երեխաները նախքան դպրոց ընդունվելը պետք է տիրապետեն կարդալու կարողություններին:
- Ամբողջական միջնակարգ դպրոցն ավարտողների թվաքանակը պետք է բարձրանա մինչև 90%:
- Ամերիկյան դպրոցականները պետք է քննություն հանձնեն 4-րդ, 8-րդ և 12-րդ դասարաններում և գործիմացություն ցուցաբերեն առանցքային առարկաների՝ անգլերեն լեզվի, մաթեմատիկայի, բնագիտության, պատմության և աշխարհագրության հանդեպ: Յուրաքանչյուր միջնակարգ դպրոց պետք է ապահովի շրջանավարտների պատրաստվածությունը, նպաստի կրթությունը շարունակելու կամ ժամանակակից տնտեսության մեջ արդյունավետ աշխատելու կարողության ձևավորմանը:
- Ամերիկյան դպրոցականները բնագիտական և մաթեմտիկական առարկաների գիտելիքների իմացության մակարդակով պետք է աշխարհում զբաղեցնեն առաջատար դիրքեր:
- Բոլոր չափահասները պետք է ստանան գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են համաաշխարհային տնտեսության ճանաչման, իրենց քաղաքացիական պարտականությունների կատարման և իրավունքների դրսևորման համար:
- Բոլոր դպրոցները պետք է զերծ լինեն թմրամիջոցներից ու բռնություններից. Այնտեղ պետք է տիրեն կարգապահությունը և հանդուրժողականությունը:

ԱՄՆ –ու առկա է Ֆրանսիական դպրոցներ: Ֆրանսիական 5-ամյա սկզբնական դպրոցի ուսումնական դասընթացը բաժանվում է երեք փուլերի.

- Նախապատրաստական (1 տարի),
- Սկզբնական(2 տարի),

- Միջին (2 տարի):

Դասարանային պարապմունքները շաբաթվա մեջ 26 ժամ:

Ուսումնական առարկաները բաժանվում են երեք խմբերի մեջ.

Առաջին խումբ - ֆրանսերեն, պատմություն, աշխարհագրություն, քաղաքագիտություն- ուսումնական ժամանակի մոտ 40 %-ը շաբաթական՝ 8-10 ժամ

Երկրորդ խումբ- մաթեմատիկա (6 ժամ), բնագիտություն, տեխնոլոգիա և բնագիտություն, տեխնոլոգիա- 35%-ը

Երրորդ խումբ-ֆիզիկական դաստիարակություն (5 ժամ), կերպարվեստ և երաժշտություն- 25 %-ը:

Հիմնական շեշտը դրվում է կիրառական նյութերի, գրական խոսքի, գրելու և հաշվելու տարրական կարողությունների յուրացման վրա:

80-ական թվականների սկզբին մի շարք սկզբնական դպրոցներում փորձարարական կարգով ներդրվեց օտար լեզուների ուսուցում: Պետք է նկատել, որ վերջին տարիներին երկտարեցիների թիվը նվազում է, սակայն այդ խնդիրները դեռևս մտահոգության տեղիք է տալիս:

Սկզբնական դպրոցն ավարտելուց հոտո բոլոր սովորողները տեղափոխվում են ոչ ամբողջական միջնակարգ դպրոց՝ 4-ամյա քոլեջ: (տես՝ նկ 2)⁹

Հանրակրթական ոլորտի զարգացումը Շվեյցարիայում

Շվեյցարիան 26 ինքնավար շրջաններից կազմված դաշնային պետություն է: Յուրաքանչյուր շրջանում կամ մարզում, որը նաև համարվում է դաշնության սուբյեկտ, գործում են օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ: Շրջաններն ունեն ֆինանսական և հարկային ինքնավարություն: Շվեյցարիան բազմազգ երկիր է: Պաշտոնական լոզուն են՝ գերմաներենը, ֆրանսերենը, իտալերենը: Լեզվական գործոնը մեծ ազդեցություն է թողնում դպրոցական կրթության բովանդակության վրա, և քիչ չեն այնպիսի դեպքեր, երբ երկրի գերմանական կամ ռոմանական հատվածի բնակիչները որպես հաղորդակցման միջոց ընտրում են անգլերենը: Երկրի բնակչության թիվը մոտ 7 միլիոն է: Արտասահմանցիները մոտ 17 % են: Ժնևի շրջանում, որտեղ տեղաբաշխված են

⁹ www.edu.am

տասնյակ միջազգային կազմակերպություններ, արտասահմանցիների թիվը հասնում է 40%-ի:

Շվեյցարիայի յուրաքանչյուր շրջան կրթության ոլորտում ունի իր օրենսդրական և նախանձախնդրորեն պաշտպանում է ընդհանուր կրթության ինքնավարությունը: Քանի որ կրթության ոլորտում կյանքն անհրաժեշտաբար թելադրում է ընդհանուր և համաձայնեցված քաղաքականության իրականացում, 1971թվականին ստորագրվեց փաստաթուղթ <<Կոնկորդատ դպրոցական համաձայնության մասին>>:

Շվեյցարիայում մանկապարտեզները չեն համարվում պարտադիր:

Շրջանային կամ մարզային օրենքները հնարավորություն են տալիս, որ երեխաները սկզբնական դպրոցից մեկ տարի առաջ հաճախեն մանկապարտեզներ: Այդ իրավունքից օգտվում է երեխաների 99%-ը, երեխաների 63%-ը մանկապարտեզ է հաճախում երկու տարի: Սկզբնական դպրոց հաճախելը պարտադիր է: Առաջին դասարանում շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը 20 ժամ է: Սկզբնական դպրոցի հետագա դասարաններում շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմում է 36-28 ժամ: Որպես կանոն՝ ամբողջ ուսումնական գործընթացն իրականացնում է մեկ ուսուցիչ: Կրթության բովանդակության ¹⁰ շրջանականերում, բացառությամբ մի քանի առարկաների(մայրենի և օտար լեզուներ, մաթեմատիկա) ուսուցչին տրված է որոշակի ինքնավարություն և ազատություն:¹¹

Միջնակարգ կրթությունը նախատեսում է երկու աստիճան՝ կրտսեր և ավագ: Առաջին աստիճանի դպրոցները բազմազան են:

Նրանք կարող են կոչվել միջնակարգ դպրոցներ, պրոգիմնազիաներ, ռեալական դպրոցներ, սկզբնական ավագ դպրոցներ և այլն: Կախված տվյալ մարզի օրենսդրությունից՝ ուսման ժամանակահատվածը տատանվում է 3-ից 5 տարի: ուսումնական պլաններում ներառված են մայրենի և երկրորդ պետական լեզուն, մաթեմատիկան, բնագիտությունը, պատմությունը, աշխարհագրությունը, քաղաքագիտությունը, երաժշտությունը, նկարչությունը, ֆիզկուլտուրան և

¹⁰ hy.wikipedia.org

¹¹ krtutyun.wordpress.com

Ֆակուլտատիվները: Այլ առարկաների ուսուցումը պայմանավորված է մասնագիտության ընտրությամբ: Կրտսեր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո մի քանի մարզերում սովորողները հիմնական առարկաներից հանձնում են գրավոր կամ բանավոր քննություններ և ստանում ոչ լրիվ միջնակարգ կրթության վկայական:

Միջնակարգ դպրոցի երկրորդ աստիճանի մեջ ընդգրկում են այն հաստատությունները, որոնք իրավունք ունեն վկայական տալու: Այդ դպրոցները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնող դպրոցները ճանապարհ են բացում դեպի բարձագույն կրթություն(գիմնազիաներ, լիցեյներ, քոլեջներ): Երկրորդ խմբի դպրոցներն աչքի են ընկնում անհամեմատ ցածր պահանջներով և ուսումնառության կարճ ժամկետներով (2-3 տարի), միաժամանակ պետական վկայականի փոխարեն հանձնում են դիպլոմ: Նրանք պատրաստում են մշակույթ, առողջապահության և տուրիզմի բնագավառների համար ցածր և միջին օղակների մասնագետներ: (տես` նկ 3)

Եզրակացություն

Ուսումնասիրելով ՀՀ-ի և արտերկրի կրթական չափորոշիչները, կրթական որակը, հաշվի առնելով առկա տարբերություններն ու նմանությունները, հասկացանք, որ մեր

երկրում կան շատ բացեր, որոնք անհրաժեշտ է լրացնել: Կրթության համակարգի զարգացումը պահանջում է հանրակրթական դաշտի փոփոխություն, ինչպես նաև կառավարման համակարգի կատարելագործում:

Հանրակրթությունը կարևոր է նրանով, որ այն միակ, պարտադիր օղակն է, որ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է հանրակրթության գործընթացի մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլորի հավասար կրթության իրավունքի, անվճար պարտադիր միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:

Կրթության համակարգի զարգացումը ենթադրում է նաև նրա ինտեգրացումը միջազգային կրթական հանրությանը, պետական կրթական չափորոշիչների համապատասխանեցում միջազգային կրթական չափանիշներին, ուսուցման և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում, մասնակցությունը կրթական ծրագրերին, գիտելիքների գնահատման համակարգի արդիականացում միջազգային չափորոշիչներին համապատասխան:

Այս ամենը հաշվի առնելով պետք է հասկանալ, որ կրթության համակարգի զարգացման կառավարումը ենթադրում է փուլային ընթացք, որի ժամանակ պետք է իրագործվեն.

- կրթության համակարգի պահպանմանն ուղղված համալիր միջոցառումներ և նրա զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում,
- անցումը կրթության համակարգի կայուն զարգացման,
- անցումը կրթության համակարգի համակողմանի առաջընթացն ապահովելու:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ.Թ Ասատրյան, Կրթական համակարգերի կառավարման հիմունքները ուսումնամեթոդական ձեռնարկ 1 մաս, Երևան 2003
2. Ա.Ս Հարությունյան, Համեմատական մանկավարժություն ուսումնական ձեռնարկ, Երևան 2004թ, էջ 50
3. Ասատրյան Լատիբա Թոռնիկի, Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան 2009թ.
4. Ասատրյան Լ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները Երևան 2009, էջ 4-5
5. Սերգեյ Մանուկյան, Ընդհանուր մանկավարժություն, Երևան 2005
6. Սիմոնյան Յ., Հայ մանկավարժության պատմություն Եր., 2006թ. էջ 14-15
7. Կրթական համակարգերի կառավարում (դասախոսություններ)
8. Համեմատական մանկավարժություն (դասախոսություններ)
9. ՀՀ օրենքը կրթության մասին, 1999թ.
10. ՀՀ աշխատանքային օրենքը աշակերտներին թույլատրելի աշխատանքային ժամանակի մասին, հոդված 17
11. krtutyun.wordpress.com
12. hy.wikipedia.org
13. www.edu.am
14. <http://www.parliament.am/>
15. <http://www.gov.am/am/>